

Քիզնեսը և կոռուպցիայի դեմ պայքարը

Չեկույց

Հարգելի գործընկերներ և սիրելի լրագրողներ,

Այսօր իմ զեկույցը նվիրված է լինելու մի ոլորտի, որը վերջին ժամանակներս ավելի ու ավելի է ուշադրության արժանանում կոռուպցիայի երևույթի ուսումնասիրությանը նվիրված միջազգային հետազոտական կենտրոնների և առանձին փորձագետների կողմից: Այս ոլորտը մեր կազմակերպության համար ևս համեմատաբար նոր հետաքրքրության առարկա է, և սկսել ենք առաջին քայլերն անել այս տարի Օրինավորության ազգային համակարգի ուսումնասիրության կոնստեքստում և քայլ առ քայլ շարունակում ենք այս ոլորտի վերաբերյալ մեր ուսումնասիրությունների խորացումը: Այսպես, այս զեկույցում անդրադարձ կկատարվի հետևյալներին.

Ա. Իրավիճակը Հայաստանում ըստ միջազգային ուսումնասիրությունների և հետազոտությունների. Արձանագրված խնդիրները և դրական միտումները, հպանցիկ անդրադարձ այն առասպելին թե կոռուպցիան ձեռնառն է քիզնեսի զարգացման համար

Բ. Կոնցեպտուալ մակարդակում որոշակի կարծիքների ներկայացում և՛ քիզնես-պետություն առաջին մակարդակում, որտեղ նախաձեռնող կողմ հանդես է գալիս քիզնեսն ինքը, և քիզնես-պետություն երկրորդ մակարդակում, որտեղ դասական առումով պետությունն է ի կատար ածում իր իսկ պարտավորությունները խնդրի շուրջ:

Այժմ ձեր թույլտվությամբ անդրադարձ կատարենք Հայաստանի տիրող պատկերին ըստ տարբեր ուսումնասիրությունների: Վստահ կարելի է պնդել, որ Հայաստանի այս ոլորտում հարատև ձեռքբերումներից է քիզնեսի բացման գործընթացի ծայրահեղ պարզեցումը: Այսպես, բոլորովին վերջերս հրապարակված Doing Business 2016թ.-ի տվյալներով քիզնեսի սկսման (starting business) ցուցիչով Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է գերազանց հորիզոնական՝ 5-րդը: Նույն ուսումնասիրությամբ նախորդ տարված համեմատությամբ լավացել է «Շինարարական թույլտվությունների» ցուցիչը և 72-րդ հորիզոնականից Հայաստանը հանգրվանել է 62-րդ հորիզոնականը, ինչպես նաև «անդրսահմանային առևտուր» և «պայմանագրերի գործադրում» ցուցիչները (առաջինի դեպքում առաջադիմություն է կատարվել 29 հորիզոնականով, և այժմ զբաղեցնում ենք 29-րդ հորիզոնականը, իսկ երկրորդի դեպքում՝ շուրջ 8 հորիզոնականով և այժմ զբաղեցնում ենք 28-րդ հորիզոնականը): Ընդհանուր առմամբ այս ուսումնասիրության շրջանակներում Հայաստանը առաջադիմել է 3 հորիզոնականով և այժմ 189 երկրների շարքում զբաղեցնում է պատվավոր 35-րդ հորիզոնականը:

Այնուամենայնիվ, մեկ այլ ուսումնասիրությամբ, որը, վստահորեն կարելի է պնդել, ավելի համապարփակ է ցույց տալիս երկրների տնտեսության մրցունակությունը, Հայաստանի պատկերը մտահոգության լուրջ տեղիք է տալիս: Խոսքը վերաբերում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից ամենամյա կազմվող Համաշխարհային մրցունակության ինդեքսին: Այն ներառում է 3 հիմնական ցուցիչ (Բազային պահանջներ, Արդյունավետությունը ամրապնդող ցուցիչներ, Ինստիտուցիայի և բավարարվածության ցուցիչներ) որոնք բաժանվում են 12 ենթացուցիչների, որոնք իրենց հերթին բաժանվում են այլ ենթացուցիչների: Այսպես, այս ինդեքսի ներքո 2015-2016թթ. զեկույցով Հայաստանը 140 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ հորիզոնականը, որը, ակնհայտ է, որ չի համարվում հուսադրող հորիզոնական: Նախկին խորհրդային պետությունների հետ համեմատությամբ՝ մենք գտնվում ենք առջևում միայն Մոլդովայից և Ղրղզստանից: Ըստ

այս հետազոտության՝ բիզնես գործունեության առաջին հինգ խոչընդոտներն են՝ ֆինանսների մատչելիության պակասը, ոչ արդյունավետ բյուրոկրատիան (վարչարարությունը), արտադրության կարգավորումները, կրթված աշխատուժի պակասը և կոռուպցիան: Իսկ 7-րդ և 8-րդ տեղում են հարկային դրույթաչափերը և հարկային կարգավորումների խրթնությունը:

Կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել մի քանի ենթացուցիչների վրա. այսպես, ոչ կանոնավոր վճարումների և կաշառքի ենթացուցիչով Հայաստանը զբաղեցնում է 73-րդ հորիզոնականը, կառավարության կարգավորումները՝ որպես բիզնես համայնքի համար բեռ ցուցիչով՝ 56-րդ հորիզոնականը, կազմակերպությունների էթիկ վարքագծի ցուցիչով՝ ընդամենը 96-րդ հորիզոնականը, կազմակերպությունների խորհրդների արդյունավետության ցուցիչով՝ ընդամենը 94-րդ հորիզոնականը, իսկ փոքրածավալ բաժնետերերի պաշտպանության ցուցիչով՝ ընդամենը 108-րդ տեղը:

Սակայն նույն հետազոտությամբ ներդրողների պաշտպանության առումով Հայաստանը զբաղեցնում է պատվավոր 48-րդ հորիզոնականը: Այնուամենայնիվ հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությամբ զբաղեցնում ենք 88-րդ հորիզոնականը, տեղական մրցունակության ինտեսիվության ցուցիչով՝ 85-րդ հորիզոնականը, հարկահավաքությունը՝ որպես արդյունավետ միջոց ներդրումների խրախուսման համար ցուցիչով զբաղեցնում ենք 76-րդ հորիզոնականը:

Կրկին ըստ նույն ուսումնասիրության՝ Հայաստանը համաշխարհային մակարդակում լավագույն եռյակի մեջ է գտնվում բիզնեսի բացման ցուցիչով՝ 3-րդը աշխարհում: Մաքսային ընթացակարգերի բեռի ցուցիչով Հայաստանը զբաղեցնում է ծայրահեղ վատ հորիզոնականներից մեկը՝ 105-րդը 144 երկրների շարքում: Սակայն ամենից մտահոգիչը և տազնապալիցը երկրի ունակությունն է պահել սեփական երկրում տաղանդները և ներգրավել այլ երկրներից տաղանդներ: Առաջինի առումով զբաղեցնում ենք ծայրահեղ վատ հորիզոնական՝ 119-րդը 144 երկրների շարքում, ինչը նշանակում է՝ ուղեղների արտահոսքը չի կանգնում Հայաստանում: Իսկ երկրորդի առումով 111-րդն ենք 144-ի շարքում:

Եթե անցկացնենք համեմատություններ խորհրդային ռախիկն պետությունների հետ (ուսումնասիրություն չի անցկացվել միայն Բելառուսում, Թուրքմենստանում և Ռեգենկստանում), ապա առաջինը Էստոնիան է՝ 30-րդ հորիզոնականում իսկ մենք 12-ի մեջ ընդամենը 10-րդն ենք՝ Մոլդովայից և Ղրղզստանից առաջ:

Եվս մեկ կարևոր հետազոտություն, որ կցանկանայի նշել. դա Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկի կողմից կազմվող Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների կատարողականը հարցախույզն է՝ այսպես կոչված BEEPS: Ըստ ամենից թարմ BEEPS V-ի տվյալների՝ Հայաստանի բիզնես միջավայրի ամենից լուրջ 5 խոչընդոտներն են՝ ֆինանսների մատչելիության պակասը, հարկահավաքությունը, քաղաքական անկայունությունը, որը կապված է Արցախի Հանրապետության շուրջ մեզ պարտադրվող ռազմական բախումներով Ադրբեյջանի կողմից, կոռուպցիան և մաքսային ու առևտրային կարգավորումները: Վերջինիս առնչությամբ նույն հետազոտությունից բառացիորեն մեջբերում եմ. «Միջինում պահանջվում է 8.6 օր մաքսային ընթացակարգերը ավարտելու համար ուղղակի ներկրումների դեպքում և 17.6 օր ուղղակի արտահանումների համար»: Նաև շարունակվում է. «Սա հատկապես մտահոգիչ է, հաշվի առնելով որ Հայաստանը փոքր բաց տնտեսություն է, որի բիզնես հատվածը մեծապես հենվում է առևտրի վրա»: Համեմատության համար պետք է նշել, որ ըստ նույն ուսումնասիրության՝ Արևելյան

Եվրոպայի և Կովկասի երկրների և BEEPS երկրների միջին օրերի քանակը ներկրման համար մոտավորապես գրեթե 7 օր է, իսկ արտահանման դեպքում BEEPS երկրների միջին օրերի քանակը գրեթե 5 օր է:

Նույն ասումնասիրությամբ՝ այն հարցին, թե որքանով են մասնավոր վճարումները/նվերները կամ այլ մադարիչները պետական պաշտոնյաներին չափավոր, խոշոր կամ վճռորոշ ազդեցություն ունենում, Հայաստանի հարցվածների 27%-ը նշել է, որ ունենում են, իսկ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջինը նույն հարցի համար 14%-է: Այսինքն, տարբերությունը գրեթե կրկնակի է:

Այժմ, հարգելի գործընկերներ, թույլ տվե՛ք ներկայացնել կոնցեպտուալ մակարդակում որոշակի կարծիքներ: Բիզնեսը և կոռուպցիայի դեմ պայքարի բարեփոխումներ առաջին մակարդակում, երբ բիզնեսը հանդիսանում է բարեփոխումների ջատագով և որտեղ պետությունը դերակատարում չունի, առաջարկվում է սկսել ոլորտային ինքնակազմակերպում սերտիֆիկացիայի նպատակով: Այս փորձը ներդրված է Ֆիլիպիններում, ինչպես նաև ԳԴՀ-ի Բավարիայի նահանգում: Մեկ այլ քայլ, որ կարող է մասնավոր հատվածը սկսել, հակակոռուպցիոն հանձնառությունն է՝ միանալով UN Global Compact-ին, ինչպես նաև Transparency International-ի քարտուղարության կողմից մշակված բիզնեսի օրինավորության գործիքակազմի կիրառումը և կաշառակերության դեմ պայքարի սկզբունքներին կամավոր միացումը և իմպլեմենտացումը:

Երկրորդ մակարդակում, երբ պետությունն է հանդես գալիս որպես բարեփոխումների ջատագով, հնարավոր է ուշադրություն դարձնել հետևյալին:

1. Հարկային և մաքսային համակարգում: Երեք քայլից բաղկացած կոմբինացիա: Գնահատում, պարզեցում և օպտիմիզացում: Օրենսդրությունն արժե հակակոռուպցիոն գնահատման ենթարկել գերմանացի հակակոռուպցիոն փորձագետ Թիլման Հոպեի կողմից մշակված մեթոդաբանությամբ, որից հետո օրենսդրությունը ենթարկել ծայրահեղ պարզեցման: Այս համակարգում անբարեխիղճ կամ ոչ արդյունավետ աշխատակիցներից անհրաժեշտ է ազատվել որքան հնարավոր է շուտ, քանի որ հենց այդ աշխատակիցների հետ շփման արդյունքում է համապատասխան ընկալումը և հուսահատությունն առաջանում ձեռներեցների մոտ: Հնարավոր է ներդնել նաև արտահերթ հակակոռուպցիոն ատեստացիա: Այս ոլորտում պետությունը պետք է հստակ մեսիջ հղի բիզնեսին, որ պետությունը բիզնեսի համար է և ոչ թե նրա դեմ: Ինչպես Վրաստանի հակակոռուպցիոն հրաշքի հիմնական հեղինակը վերջերս նշեց «անհրաժեշտ չէ բիզնես հատվածին դեռ գործը չսկսած կասկածել, որ ահա նա հանցագործություն է ցանկանում անել և խեղդել զանազան ստուգումներով: Դա ընկալվում է մարդկանց կողմից որպես պետական ռեկետ»:
2. Տնտեսական մրցակցության ոլորտում: Անհրաժեշտ է այս ոլորտում տուգանքների չափերը տարբեր իրավախախտումների համար, նամանավանդ անբարեխիղճ մրցակցության համար, սանկցիաները սահմանել միայն հասույթով և մինչև 30%, որպեսզի համապատասխան հանձնաժողովը չընկալվի որպես անատամ առյուծ մրցակցությանը երաշխավորելու գործում:
3. Հնարավոր է դիտարկել մասնավոր դետեկտիվների ինստիտուտի ներդրման հնարավորությունը, որը ներդրվում է այժմ Ուկրաինայում: Սա հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել կոռուպցիայի դեմ պայքարը: Այս առումով, բնական է, անհրաժեշտ կլինի կատարել ֆունդամենտալ բնույթի մի շարք օրենսդրական փոփոխություններ:

4. Դիտարկել քննարկման մակարդակում՝ կամ բիզնես օմբուդսմենի ներդրման հնարավորությունը, կամ գործող ՄԻՊ-ին հզորացումը, որպեսզի նա հնարավորություն ունենա արդյունավետ պաշտպանել բիզնես համայնքի շահերը: Բիզնես օմբուդսմենի ինստիտուտի, ի դեպ ներդրված է Վրաստանում և գործում է:

Խոսքս ավարտելով՝ կցանկանայի հույս հայտնել որ սրանով սկիզբ կդրվի հակակոռուպցիոն 4 գերակա ոլորտներից մեկի՝ պետական եկամուտների հավաքագրման, կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրությանը և միջոցառումների ծրագրի մշակմանը:

Շնորհակալություն ուշադրության համար: